

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.6/[55232]-10

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ
ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՅԱԾ` ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին`**

Խորհրդի անդամներ`

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Հրավիրվածներ`

Ա. Աղաջանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Նռանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Խուրշուդյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Արամյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ղարիբյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական

Վ. Նիկոյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ֆ. Փիրումյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Դ. Հովսեփյան	«Egis Bceom International» Թիմի ղեկավարի տեղակալ
Հ. Նորենյան	«Egis Bceom International» նախագծման ինժեներ

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2010-2013 թվականների ֆինանսական տարիների և մինչև 2014 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի աուդիտորի տեխնիկական առաջադրանքի հաստատում

 (Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2010-2013 թվականների ֆինանսական տարիների և մինչև 2014 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի աուդիտորի տեխնիկական առաջադրանքը.

2) հանձնարարել «Հյուսիս- հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ հայտարարել 2010-2013 թվականների ֆինանսական տարիների և մինչև 2014 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի աուդիտի ընտրության մրցույթը:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 2-ի Պարբերական ֆինանսավորման հայտի հաստատում

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2-րդ փուլի պարբերական ֆինանսավորման հայտը.

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ս. Վարդանյանին՝ 2011 թվականի փետրվար ամսին ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի, ԱԶԲ-ի հետ համաձայնեցված 2-րդ փուլի, Աշտարակ-Թալին հատվածի ճշգրտված հողերի օտարման պլանը հաստատելու և դրա իրականացման համար ՀՀ պետական բյուջեից գումար հատկացնելու մասին համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագիծ.

3) ԱԶԲ-ի հետ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2-րդ փուլի վարկային պայմանագրի շուրջ բանակցություններ վարելու նպատակով ստեղծել բանակցային խումբ հետևյալ կազմով՝

ա. Մուշեղ Թումայան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (բանակցային խմբի ղեկավար),

բ. Հրանտ Բեգլարյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ,

գ. Վարդան Արամյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

դ. Արտաշես Բախշյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ,

ե. Գազիկ Գրիգորյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ,

զ. Արթուր Մայսուրյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Եվրամիության և միջազգային տնտեսական համագործակցության վարչության միջազգային տնտեսական համագործակցության բաժնի պետ.

4) ընդունել ի գիտություն, որ ԱԶԲ-ի միջոցները կուղղվեն հարավային հատվածի կառուցմանը և հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝ հյուսիսային հատվածի կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ միջոցների ներգրավման

նպատակով բանակցել Եվրոբանկի և այլ վարկատու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և այդ գործընթացն ավարտել 2011 թվականին:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի փուլ 2-րդ՝ Աշտարակ-Թալին մայրուղու՝ Ագարակ և Ուջան բնակավայրերում և Զաքարի Բերդ հնագիտական վայրում ճանապարհի ծրագծի հաստատում

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդհանուր առմամբ հավանություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի փուլ 2-րդ՝ Աշտարակ-Թալին մայրուղու՝ Ագարակ և Ուջան բնակավայրերում և Զաքարի Բերդ հնագիտական վայրում ճանապարհի ծրագծի հետևյալ տարբերակին՝

ա. Ագարակ համայնքում՝ կառուցել շրջանցող ճանապարհ և ուղեանց (առանց արագընթաց ճանապարհի հետ առնչության)՝ դեպի Աշտարակ քաղաքը մուտք գործելու համար,

բ. կառուցել Զաքարի Բերդ հնագիտական վայրը շրջանցող ճանապարհ.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝

ա. ձևավորելով պատվիրակություն՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության, Հայաստանի Հանրապետական, «Օրինաց Երկիրե, «Հայ Յեղափոխական Դաշնակցությունե, «Բարգավաճ Հայաստանե, «Ժառանգությունե կուսակցություններից և Ուջան համայնքի ներկայացուցիչների հետ ևս մեկ անգամ քննարկել Ուջան համայնքում ճանապարհի ծրագծի հնարավոր տարբերակները,

բ. քննարկման արդյունքների մասին զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

4. Ճապոնիայի կառավարության կողմից զարգացմանն ուղղված պաշտոնական օժանդակության ծրագրերի շրջանակներում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 3-րդ փուլի ֆինանսավորման նպատակով նամակ-հայտի հաստատում

(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ Ճապոնիայի կառավարության կողմից զարգացմանն ուղղված պաշտոնական օժանդակության ծրագրերի շրջանակներում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 3-րդ տրանջի ֆինանսավորման նպատակով ներկայացվելիք նամակ-հայտի վերջնական խմբագրված տարբերակին.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝

1) իր իսկ առաջարկությանը համապատասխան խմբագրել նամակ հայտի նախագիծը՝ Գյումրի-Թալին ճանապարհային հատվածը փոխարինելով Գյումրի-Բավրա ճանապարհային հատվածով.

2) սահմանված կարգով ապահովել նամակ-հայտի վերջնական տարբերակի՝ Ճապոնիայի կառավարություն ներկայացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄՈՒՇԵՂ ԹՈՒՄԱՍՅԱՆ